

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն - 25

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ՆԻՍԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՐԴԱՆ ՍԱՖԱՐՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Ա. Զաքարյանը, Վ. Մկրտչյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Շուխյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Բ. Վարդանյանը, Հ. Վարդանյանը, Ս. Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը, խորհրդական Ա. Ոսկանյանը, աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը, Շ. Վահանյանը, ինչպես նաև Աշտարակ համայնքի բնակիչ Ն. Բոցինյանը:

1. Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

/Ջեկուցող՝ Գ. Եղիազարյան/

3. Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Ջեկուցող՝ Գ. Եղիազարյան /

4. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանին <<Քաղաքապետերի դաշնագիրը>> ստորագրելու համաձայնություն տալու մասին:

/Ջեկուցող՝ Ա. Ոսկանյան/

6. Աշտարակ համայնքի ավագանու 25.12.2018թ. N 7-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/Ջեկուցող՝ Ա. Մնացականյան/

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակությանը հողամասն աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Ջեկուցող՝ Ա. Մնացականյան/

/1/ Օրակարգը հաստատվել է 9 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:

Ն. Պետրոսյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Աշտարակ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի տեղակալ Գևորգ Եղիազարյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Զեկուցողը, մասնավորապես, թվային և տոկոսային համամասնությամբ ներկայացրեց 2018 թվականի բյուջեի եկամտային և ծախսային հատվածները:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ա. Սարգսյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Օվոյանը: Հարցերը հիմնականում վերաբերվում էին նախատեսված աշխատանքների կատարման հնարավորություններին:

Զեկուցողը նշեց, որ ընթացիկ տարում համայնքում նախատեսվում են մի շարք աշխատանքներ, որոնց կատարման նպատակով ձեռնակվում են քայլեր այլ ֆինանսական միջոցներ ներգրավելու համար:

Բարձրացված մնացած հարցերին ևս սպառիչ պատասխաններ տրվեցին Գ. Եղիազարյանի կողմից:

10 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Հաջորդ հարցը ևս ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գևորգ Եղիազարյանը և առաջարկեց հավանություն տալ 2019 թվականի Աշտարակ համայնքի բյուջեում փոփոխություն կատարելուն:

Զեկուցողը նշեց, որ 2018 թվականի բյուջեի կատարման արդյունքում առաջացել է ազատ մնացորդ (կազմում է մոտ երկու միլիոն քսանվեց հազար երեք հարյուր դրամ), որն ուղղվելու է համայնքի գազի, էլեկտրաէներգիայի վճարմանը: Միաժամանակ, Գ. Եղիազարյանը ներկայացրեց համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեով սահմանված վարչական և ֆոնդային հատվածներում սահմանված թվերը:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Սարգսյանը, որոնց հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանի կողմից:

9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ն. Պետրոսյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո, ինչպես նաև ցուցակում ընդգրկված են սոցիալապես անապահով խավի և մեկ զոհվածի ընտանիքի ներկայացուցիչներ:

Զեկուցողին հարցեր ուղղեց Կ. Շահազիզյանը, որոնց աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանի և Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառօրհչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանին <<Քաղաքապետերի դաշնագիրը>> ստորագրելու համաձայնություն տրվեցին

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի խորհրդական Ա. Ոսկանյանը և առաջարկեց համաձայնություն տալ համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանին՝ ստորագրելու <<Քաղաքապետերի դաշնագիրը>>:

Զեկուցողը, մասնավորապես, նշեց, որ դեռևս 2014թ. Աշտարակ համայնքը միացել է այդ նախաձեռնությանը, սակայն ինչ-ինչ պատճառներով հնարավոր չի եղել շարունակել աշխատանքները: Ներկայումս կա առաջարկ ծրագրին միանալու, որը հնարավորություն կստեղծի մինչև 2030 թվականը միանալու այդ դաշնագրին, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա մեծացնել համայնքի էներգախնայողությունը:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ս. Օվոյանը, Վ. Մկրտչյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Սարգսյանը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառօրհչ պատասխաններ:

9 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - Աշտարակ համայնքի ավագանու 25.12.2018թ. N 7-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով, փոփոխություն կատարել Աշտարակ համայնքի ավագանու 25.12.2018թ. թիվ 7-Ա որոշման մեջ:

Զեկուցողը, ի պատասխան Ս. Օվոյանի հարցի նշեց, որ խնդիրը տեխնիկական բնույթի է, որը թույլ էր տրվել ավագանու՝ նախկինում ընդունած որոշման մեջ:

9 -ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակությանը հողամասն աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տրվելու մասին

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի

Հանրապետության Հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, թույլատրելի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը, որի իրադրության հատակագիծը կցված է նախագծին, օտարել աճուրդ-վաճառքով, միաժամանակ սահմանել նաև մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Կ. Շահագիզյանը, Ա. Սարգսյանը, Ս. Օվոյանը:

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին Ա. Մնացականյանի կողմից:

10 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2019 թվականի հունվարի 24-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝

Վ. Ս Ա Ֆ Ա Ր Յ Ա Ն